ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 օգոստոսի 2018 թվականի N 214-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 22-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի հունվարի 27-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման մարզային հանձնաժողով ստեղծելու մասին»* N 22-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) որոշման 4-րդ կետում ***«Մ. Մանասյանի»*** բառերը փոխարինել *«Վ. Վարդանյանի»* բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2018 թվականի օգոստոսի 09
ք. Հրազդան

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 09-Ի N 214-Ա ՈՐՈՇՄԱՆ

«Հավելված N 1
ՀՀ Կոտայքի մարզպետի
«27» հունվարի 2012թ. N 22-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. *Վասակ Վարդանյան* - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2. *Կարեն Մաղաքյան* - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ *(համաձայնությամբ)*,

3. *Արմեն Հակոբյան* - հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ,

4. *Տարոն Գևորգյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,

5. *Վահագն Ոսկանյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

6. *Ալբերտ Հարությունյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,

7. *Մանվել Պետրոսյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ,

8. *Արամ Վիրաբյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ,

9. *Անդրանիկ Ասատրյան* - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ:»: